ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 51 – Ա **13 մարտի 2018 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ N 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգ>>-ի 9-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցույթային հանձնաժողովի 2018 թվականի մարտի 13-ի N 1 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2018 թ. մարտի 13 -ի

N 51-Ա որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մարզային մրցութային հանձնաժողովի

13 մարտի 2018թ. **ք. Գավառ**

2018 թվականի մարտի 13-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի մարզային մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի

Նախագահ՝ Կ. Հակոբյան
Քարտուղար՝ Գ. Խաչատրյան
Անդամներ՝ Կ. Բաղդասարյան
Գ. Գրիգորյան
Լ. Գևորգյան

Օրակարգում

Ներմարզային Սևան(Ա/Կ) – Լճաշեն – Սևան թիվ 21 միկրոավտոբուսային երթուղու սպասարկման ժամկետները երկարաձգելու մասին:

Քննարկվեց

2018 թվականի մարտի 21-ին լրանում է Սևան(Ա/Կ) – Լճաշեն – Սևան թիվ 21 միկրոավտոբուսային երթուղու սպասարկման ժամկետը: Անհրաժեշտությունից ելնելով առաջարկվում է ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին>> թիվ 762 որոշման 62-րդ կետի պահանջներով, մինչև նոր մրցույթի անցկացումն ու արդյունքների ամփոփումը լիազորել <<Առողջ մարզիկ>> ՍՊԸ ժամանակավորապես իրականացնել Սևան(Ա/Կ) – Լճաշեն – Սևան թիվ 21 միկրոավտոբուսային երթուղու սպասարկումը՝ նախկին մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած տրանսպորտային միջոցներով.

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման 62-րդ կետի պահանջները՝ մինչև նոր մրցույթի անցկացումն ու արդյունքների ամփոփումը լիազորել <<Առողջ մարզիկ>> ՍՊԸ ժամանակավորապես իրականացնել Սևան(Ա/Կ) – Լճաշեն – Սևան թիվ 21 միկրոավտոբուսային երթուղու սպասարկումը՝ նախկին մրցույթով արտոնագրված և դեղին հիմնագույնի համարանիշեր ստացած տրանսպորտային միջոցներով.

2. ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Մրցութային հանձնաժողովի

Նախագահ՝ Կ. Հակոբյան

Քարտուղար՝ Գ. Խաչատրյան

Անդամներ՝ Կ. Բաղդասարյան

Գ. Գրիգորյան

Լ. Գևորգյան